



ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիելյան

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՈՐՈՇԵ
ԼՈՒ ՀԱՄԱՐ

Եթէ առաջարկէնք որ ի փարիզ կամ ի Լոնտոն մեծ ժողով մի լինէր ուր Ազգին բարձրագոյն զարգացման հասած եկեղեցական և աշխարհական անձնաւորութիւնք, 40 կամ 50 հոգի, աշխարհի ամեն կողմէն հաւաքուած, քննէին Հայկական ինդիւրի և ծրագրէին ազգային քաղաքականութիւնն մի. — պիտի ըսէին շատեր թէ մեք միշտ անգործադրելի և դժուար բաներ ընել կ'առաջարկեմք, թէ Թուրքիայէն ու Ռուսիայէն կարեւոր անձնաւորութիւնք չեն կրնար իրենց պաշտօն, թեմ, Լրագիր, գործ թողուլ և Եւրոպա գալ, շատ ծախք կը լինի, և կառավարութիւնք կը կասկածին, թող չեն տար կամ կը պատժեն յետոյ :

Ուրեմն առաջարկին ուրիշ ձեւի տակ դնելով բառնանք այդ առարկութիւններ : Ահա «Հայք» բեմ մ'է ուրկէ կրնան խօսիլ այդ մեծ անձնաւորութիւնք, առանց իրենց անուն գիտցունելու, առանց ուղեւորութեան ծախքերն ու դժպատեհութիւններն կրելու :

Պօսեցուցինք նախ հոգեւոյն ներսէս Պատրիարքն, ըստ իւր ժամանակի պարագայից : Ուղեցինք որ անոր ետեւէն խօսէր ոմն աւելի հեղինակագոր քան զմեզ, և

բանար հակաճառութեան շարքն, սակայն ստիպուեցանք մե'ք խօսիլ անարժանաբար, և ներկայացունել ընդհանուր խորհրդածութիւններ Ազգային քաղաքականութեան հիմանց նմատմամբ : Արդ ժամ է որ կարողներն խօսին, հետ զհետէ ի բեմն ելնեն, եթէ կ'ուզեն յայտնապէս, եթէ ոչ կեղծ անուան մի քօղին տակ ծպտեալ, և քննեն ու ճշդեն ազգային ողջ և ամբողջ քաղաքականութեան մի զանազան կողմերն, որպէս զի յոտակ ըմբռնում, ընդհանուր համոզում և խորին հաւատք ստեղծուի թէ ինչ է իսկապէս մեր դասն և ինչ ընթացիւք և ինչ միջոցներով կարելի է գայն վստակիլ :

*

* *

Հեռագրական լուրեր ծանուցին թէ վեհ. կաթողիկոսն՝ Խրիմեան Հայրիկ պիտի ուղեւորի դէպ յիջմիածին : Մաղթենք որ ուրախալի լուրն ստոյգ լինի այս անգամ, և շուտով կարենայ հանուրց Հայոց Հայրապետն սկսիլ հովուել իւր բազմակարօտ հօտն :

*

* *

Արդէն միանգամ հասկցուցած եմք, և նորէն հարկադրեալ եմք խնդրել որ «Հայքի» մէջ հրատարակուելու համար դատենաւոր չյղուի մեզ :



HAÏK

Entered as second-class mail matter at P.
O., New York, N. Y.

Address Հասցե
Editor of "Haïk," 202 West 23 St.
New York U. S. America.
Կամ Redaction de la Revue "Haïk," Լն :

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը
բաղկանայ 16 էրեսներէ, և կը հրատա-
րակուի ամիսն երկու անգամ :

Տարեկան բաժնեգինն է ամեն երկ-
րաց համար երկու տոլար կամ 10 Ֆրանք
Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Ոգիւն Մեր Մէջ.— Ընդհանուր Տե-
սութիւն մի.— Մեր նոր Գրողներն և Արդի Հա-
յերէն Լեզու.— Ե...Փիլիսոփայի Գրական Նշ-
խարմերէն.— Ամուսնութեան խնդիր.— Քաղա-
քական, Ազգային և զանազան լուրեր :

Կը խնդրեմք որ մընի օրաըրի կամ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ
գիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր :

ԱԶԳԱՅԻՆ ՈՒԻՆ

ՄԵՐ ՄԵՋ

Հանրային ոգի, ընկերային ոգի, ազ-
գային ոգի՝ իրարու հոմանիշ բացատրու-
թիւններ են :

Այն անհատն որ իւր գտնուած հան-
րութեան շահերն կը հոգայ իբրեւ իւր ան-
հատական շահերն, կը կրէ Հանրային ոգի :
Այն որ զուրկ է այդ ոգիէն, երբ անոնէ
քաղաքին փողոցներն անմաքուր, կը մը-
տածէ. «Ինձ ինչ փայթ, մեր փողոց մա-
քուր է :» Երբ վարժարաններն անբաւա-
կան կամ անբարեկարգ գտնէ, ինքն իրեն
կ'ըսէ. «Հոգ չէ ինձ, ես դաւակ չունիմ
այդ վարժարանաց մէջ :» Թաղային կամ
քաղաքային պաշտօնէից ընտրութեան օ-
րըն, կը խորհի յանձին. «յարմարագոյն
անձինք ընտրել տալու համար չարժեք որ
ես խօսիմ ու աշխատիմ, և ժամանակ կո-
րուսանեմ քուէարկութեան մասնակցե-
լու, որոնք ալ որ ընտրուին, ինձ շատ
ֆեստ չունի :» Ընդհակառակն, Հանրային
ոգւով վառեալ անհատն Հանրութեան
գործերն իւր անհրաժեշտ պարտաւորու-
թեանց չըմանին մէջ կը նկատէ, և մինչև
անգամ յօժար է յօգուտ Հանրային իրաց
բարւոք կարգադրութեան գոհել ի հարկին
իւր անձնական հաճոյքն և շահն իսկ :

Այն ընկերութիւն, որոյ Հանրային ո-
գին թուլացած է, կը յետադիմէ և կը
քայքայի տակաւ :

Տաճկաստանի մէջ Հանրութիւնն ցե-
ղով, կրօնիւ և լեզուաւ իրարմէ տարբեր
հասարակութիւններէ բաղկացած լինե-
լով՝ Հանրային ոգին մշակուիլ չէ կրցած
այլ անհատականութիւնն և մանաւանդ
հստկանութիւնն չափազանց զօրացած է :

Ընկերութեան աւերիչ այդ ետակա-
նութեան միակ դարմանն է ԱԶԳԱՅԻՆ ՈՒ-
ԳԻՆ : Առատօրէն ունին Յոյնք այդ ոգիէն,
ուստի և նոցա հասարակային գործերն և
հաստատութիւնք կը յաջողին ու կը ծաղ-
կին : Ամեն տարի, ամեն ամիս, նոր յոյն
բարերարի մի անունն կամ ահագին մէկ նու
իրատուութեան համբաւն կը հնչէ յուն-
կըն աշխարհի : Յոյն ազգին ստորին և վե-
րին բոլոր դասուց մէջ հզօր է ազգային
ոգին, և ամեն ոք իւր Կարողութեան հա-
մեմատ նախանձաւոր է հասարակային ի-
րաց համար :

Մեք Հայքս շատ ետ եմք այդ մասին :
Մենէ շատեր իրենց առուտութիւնն ու
չահովն միայն կը դրողին : Փոքր ի շատէ
կրթատէր եղող ծնողք կը ջանան իրենց
զաւակներ լաւ վարժարան մի յղել, փոյթ
չէ թէ վարժարանն օտար հաստատու-
թիւն լինի : Քիչ մ'աւելի բարձր խորհող-
ներն, ընտանեկան անձուկ չըջանէն դուրս
ալ դորձ մի կը նշմարեն .— Թաղային
գործերն, և կը յօժարին այդ գործերու
միջամուկ լինիլ եթէ նիւթական փնաս
չլինիր իրենց և փառասիրութիւնն կըր-
նայ յագուրդ գտնել :

Այդ թաղային ոգին դեռ ազդային ո-
գւոյ մէկ երեւոյթն է : Ճշմարիտ է թէ
մարդ կրնայ և պարտի աւելի օգտակար
հանգիստնալ այն հանրային գործերու
մէջ որք իւր թաղի շրջանին կը վերաբե-
րին, բայց եթէ գործիչն ազգային կամ ա-
ւելի մեծ շրջանի շահերն զոհէ թաղային
շահերուն, յայտնի կը ցուցնէ թէ ինքն
դեռ թաղային ետականութեան ստորին ո-
գւոյն կը ծառայէ փոխանակ ճշմարիտ ազ-
գային կամ հանրային ոգի կրելու : Եւ այդ
է ահա, այդ թաղային ետականութիւնն
որ մեր մէջ աւելի կը տեսնուի :

Ի հաստատութիւն ասոր կրնանք ազ-
գային լրագրութենէ ստուգապատում օ-
րինակներ յիշել : Ահա թէ ինչ կը կար-
դամք ԱՐՆԻՆԵԼԻԻ մէջ (27 Փետր.) «Գում-
Գափուի Մայր-Վարժարանն, Եէնի-Գա-
փուի, Գում-Գափուի դրոյի և Կէտիկ-Փա-
շայի վարժարաններուն հետ միացնելով
կեդրոնական վարժարան մը հիմնելու
գաղտնաբար շատ աարիններէ ի վեր կար . .
բայց ամեն կերպիւ օգտակար ու գործնա-
կան (և մեր յոյն դրացեաց կողմէ արդէն
ի կիր առնուած) այս գաղափար անգոր-
ծադրելի մնաց մեր մէջ և ապագայ իրա-
գործմանն ալ կը թերահաւատինք : . . . Ա-
մեն թաղ ինքն իրմով ուզեր է փայլիլ ,
և անոր համար ոչ մին բան մը կրցեր է
ըլլալ : . . . Երկու երեք թաղի մէջ գոր-
ծակցութիւն դպրոցական նպատակաւ՝ բա-
ցարձակ անկարելի եղած է »

ՄԱՍԻՍ ալ (տես թիւ Մայիս 1) կո-
րովի բողոք մի բարձաւ անցեալներ ընդ-
դէմ Ս. Կարապետի Թաղ . խորհրդոյ այն
յայտարարութեան, որով ծանուցուած էր
թէ տուն մի պիտի վարձէին ու թաղին
հարիւրաւոր տղայքը հոն պիտի դնէին :
Ինչո՞ւ ընէին զայդ, քանի որ Ս. խաչի

դռներն արդէն բաց են երեք վայրկենի
հեռաւորութեան մէջ, և երկու մասնաւոր
հայ վարժոյցներ ալ արդէն կան Ս. Կարա-
պետ թաղին մէջ : «Նոր վարժարանի մը
բացումը կը նշանակէ պարզապէս ջանալ
որ բնաւ թաղին տղայքը օրինաւոր վար-
ժարան չաւնենան, և թէ անդին ալ Ս.
խաչը, որ 5—600 դահեկանի նպաստովը
կրնայ աւելի օգտակար ըլլալ, զրկել ան-
կէ ու ամսական հաշուեկշռին մէջ խրա-
մաս մը բանալ . . . : Տակաւին չենք մոռ-
ցած որ վերջին ընտրութեանց ժամանակ,
երկու թաղերու ընտրական ժողովները
նիստ ընելու համար, օրերով տեղի խնդիր
յուզեցին . Ս. խաչ մեծ է թէ Ս. Կարա-
պետ : »

Երեւնալու, մեծ ճանչուելու հոգն շատ
միութիւններ կը քայքայէ և շատ գործակ-
ցութիւններ անկարելի կ'ընէ մեր մէջ :
Հանրային շահուն նախանձաւոր չեմք այն
աստիճան որ յօժարիմք գործելու լաւա-
գոյն եղանակներն ընտրել թէպէտ խո-
նարհիլ և մինչև իսկ զրկանք կրել պէտք
լինի :

Երեւնալու բաղձանքն է որ մենէ շա-
տերը ի գործ կը մղէ, և այն պարագա-
յից մէջ ուր երեւիլ չկայ, ձեռնպահ կը
մնամք : Նոյն իսկ խօսքով, խորհրդով,
գրչով ծառայելու չեմք յօժարիր եթէ մեր
անուն չպիտի ճանչուի :

Մինչև ցարդ Ռուսիոյ, Թուրքիոյ և
արտասահմանի մէջ գտնուող բարձր կր-
թութեան տէր Հայերն լուրջ ուսումնա-
սիրութիւն մի, կարեւոր յօգուած մի յը-
ղեցի՞ն երբէք ազատ երկրաց մէջ հրա-
տարակուող հայ թերթերու՝ կեղծ ան-
ուամբ կամ երեք աստղանիշով ստորագ-
րելով :

Կ. Պոլսոյ թերթերուն մէջ ալ խըն-
դիրներն միշտ խմբագիրներու գրչով չե՞ն
ծեծուիր . հանրային իրին հոգածութենէն
մղուած գրողներ կը տեսնէ՞ք հանրութեան
մէջէն : Միայն Յարձակման մի դէմ ինք-
զինք պաշտպանելու կամ յարձակում մի
ընելու համար կը գրեն եթէ երբէք գը-
րեն :

Խոստովանինք ուրեմն թէ ազգային
ոգին Հայոցս մէջ յոյժ սկար է դեռ : Բա-
նիմաց ազգայինք և խոհեմ գործիչք պար-
տաւոր են անձնուէր խոնարհութեան և
ինքնամոռացութեան օրինակ տալ, որպէս
զի միաբան և հզօր գործակցութիւնն մեր
մէջ ալ կարելի լինի, և մեք ալ ազգ լի-
նիլ ու կոչուիլ կարանամք :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Պոլսեցի Հայոց ու Գաւառացի Հայոց— Մեր փոքր Ազգասիրութիւնը— Վախկոտ ենք— Հայոց ամենատակաւ հալարտութիւնը և ազգային խոնարհութիւնը— Գաւառաց ոյժը.

Տէր Խմբագիր,

Մեր կացութեան վրայ ընդհանուր տեսութիւն մի կրնամ ընել առանց երկարաբանելու: Կ. Պոլսոյ մասին պիտի ըսեմ թէ, հոս կ'ապրի թէև աշխարհի մեծագոյն Հայ հասարակութիւնը, հոս չէ, գէթ առ ժամս, Հայոց յոյսն: Պոլսոյ Հայէն, մանաւանդ Պոլսեցի Հայէն, շատ բան մի՛ սպասէք: Հոս է Սուլթանն, Սուլթաններու ամենէն կասկածոտն, ամենէն վախկոտն, որ իրական և երեւակայական թշնամիներէ չըջապատուած կը զգայ ինքզինք: Ռուսիան թշնամի, Անգլիան թշնամի, պետութիւնք թշնամի, Արաբիան թշնամի, Հայերն թշնամի, Մուրաթեաններն թշնամի, ազատականք թշնամի, սոփիստներն թշնամի, այդ ամենն թշնամի կը նկատէ իւր անձին ու տէրութեանը, և մեծ հոգերով բռնաւարտուած կը գործէ, միշտ պատրաստ ըլլալով անողորմաբար մէջտեղէն վերցնելու թշնամին կամ մինչև իսկ թշնամի երեւցողներն: Զարմանալի չէ ուրեմն եթէ Հայերն շատ կը վախնան ազգասիրի երեւոյթն իսկ ունենալէ: Սուլթանը 10,000 աչքով կը նայի Հայերուն և ո՛ր է կասկածելի գիմագծութիւն չկրնար խուսափիլ անոր ամենատես տեսութենէն:

Պոլսոյ Հայերուն վրայ ուրիշ բան մը ալ կայ Հաշիւ առնուլ: Այս տեղի երեւելի, հարուստ, կարող Հայերն կա՛մ կառավարութեան հետ գործ ունին, պաշտօնեայ, յանձնակատար և այլն ըլլալով, կա՛մ այդպիսեաց հետ սերտ կապակցութիւն ունին. այս պատճառաւ մեր բոլոր վերնադոյն դասերն պահպանողական են, թուրք կառավարութեան կը նային իրենց գործին ու չափն տեսակետէն, և խստիւ կը դատապարտեն իբրեւ թեթեւօղակ ցնորեայներ այն ամեն Հայերն որ թրքէն դժգոհութիւն կը յայտնեն դրսերը կամ ներսերը: Ի՛նչ խենթութիւն է, ըստ սոցա, ազատութեան և ինքնօրինութեան

ձգտիլ: Մենք ո՞վ ենք որ Օսմանեան վեհապանծ գահուն դէմ պիտի դժգոհինք. չէ՞ որ այսչափ հարկեր տարիէ ի վեր անոր սայէէն ապրեր ենք: Մինչև իսկ մարգիկ ալ ունինք, մանաւանդ եկեղեցական կարգէն, ինչպէս Ամեն Տ. Աշըգեան Պատրիարք Հայրն, որ իրենց կրօնական պարգամիտ համոզմամբ կը հաւատան թէ Բարձեւին Աստուած իւր անհատանելի կամօքն ու բարերար նախախնամութեամբը զմեզ Սուլթաններու փառապանծ հովանոյն տակ ապաստան ըրեր է, որուն համար պէտք է փառք տալ և ցնծալ և ծափ զծափի հարկանել ոչ թէ ապերախ ցոյցեր ու խօսքեր ընել և Աստուած ու Սուլթանը բարկացնել:

Աս մեր մեծ ու փոքր երեւելիներու բոլոր բազմութիւնը ազգին անօգուտ է, և իւր գործովն ու շահովն միայն կը զբաղի. ազգութիւն, հայրենիք, Հայաստան նշանակութիւն չունին իրեն համար. կեցցէ՛ Սուլթանը, կեցցէ՛ վաստակ, կեցցէ՛ թոշակ: Այսպիսիները բարերարութիւն, գթութիւն չեն գիտեր, չեն ճանչնար, և այդ բառերը լոկ ցոյցի համար կը գործածեն: 1878էն առաջ, երբ ազգասէր ըլլալն ու Հայաստան պոռալն փաստ չունէր, աս մեծերն ալ ազգասէր և հայրենասէր երեւալ կը ջանային, հանդէսներու մէջ գոնէ: Բայց հիմա բանը փոխուած է. և լոկ բռնի համար փաստ քաշելն յիմարութիւն է: ասոնց կարծեօք, արտատահմանի մէջ կանչուըռտող գործիչներն ալ չահախնդիր և փառասէր մարդիկ են, չա՛տ չա՛տ շովի-միզմի բռնուած թեթեամիտներ:

1878էն առաջ 20—30 տարի որ ազգասիրութիւն քարոզած ու գոռացած է Պոլսոյ Հայն, ամենը կեղծաւոր բացագանչութիւն եղած է, և այսօր ահա կը տեսնենք թէ մեր մայրաքաղաքին Հայոց մէջ ազգասիրութիւն չկայ:

Զեզի քիչ մը անհաւատալի պիտի երեւնայ, բայց այսպէս է. մենք ազգասէր հասարակութիւն մը չենք: Եւ ոչ ալ արի հասարակութիւն մըն ենք: Դուք խորհած էք, կամ եթէ խորհած էք, համարձակած էք ըսելու թէ Հայը վախկոտ ժողովուրդ մըն է: Սիրաբերնիս շատ չուտով կը դողայ. մեր ստացուածքին, մեր կեանքին վրայ չափազանց կը դողանք: Պոլսոյ մէջ շատ տեսակ տեսակ տղերք կան, ամենէն վախկոտը մենք ենք:

Գաւառներուն մէջ բանը տարբեր է : Մի քանի տարիէ ի վեր անցած դարձած եղելութիւններն կը ցուցնեն թէ ներսերը անկեղծութիւն կայ, և մինչև անգամ արիութիւն : Գաւառի Հայութիւնն նուազ զեղծեալ և տկարացեալ է քան մայրաքաղաքացին : Հազարներ կան ու կարելի է բիրթ, որ իրաց անտանելի վիճակը փոխելու համար ամեն բանի յանձնառու են : Երբեմն խենթ իխենթը կը շարժին, բայց այդ իսկ մեծ բան է, և շատ աւելի յուսափայլ նշան քան մեր երեւելիներուն խոհեմութիւն անուանին տակ քողարկուած վախկոտութիւնը :

Մայրաքաղաքի Հայուն վրայ դիտուող մեծ պահաս մալ՝ այն է թէ անհատական Հպարտութեան հետ ի միասին ունի ազգային խոնարհութիւն : Իբրեւ անհատ բարձր համարում ունի ինքն իւր վրայ, և մարդու չհասնիր. եթէ իրեն ըսես որ Հայերն ալ պէտք է ունենան ինքնօրինութիւն, ազատութիւն ևն, ծիծաղելի բանազուգիւ մը կ'երևնա՝ աչքին, ինքը շատ բանի արժանի է, թագաւոր ալ ընես՝ կ'արժէ, բայց ազգը, այսինքն իւր նմանագոյններու բազմութիւնը բնաւ մաքէն ալ անցունելու չէ ազգութիւն կազմելու խորհուրդը :

Ազգային Հպարտութիւնը կը պահի մեզի : Ազգասիրութիւնն ալ կը պահի : Արիասիրութիւնն ալ կը պահի :

Այս պահաւոր Պոլսեցւոց վրայ աւելի ահազին կերպով զգալի է քան թէ գաւառացւոց : Մեր ազգին խոնարհ դասերն, արհամարեալ գաւառացիքն են որ ազգային Հպարտութիւն և զգացում նախ և առաջ զգալ սկսեցին, անոնք մենէ առաջ են, և ուսման մէջ ալ առաջ պիտի անցնին : Գաւառներուն մէջ ուսեալ Հայեր ալ կան որոնց հաւատարմ Պոլսոյ մէջ գտնել դժուար է :

Վերջապէս բուն Հայութիւնն Հայաստանի մէջ և անոր շուրջն է, ոչ թէ Պոլսոյ մէջ. և փրկութեան յոյսն ալ այն անարգեալ բայց յուսով զօրացած գաւառներէն է աւելի :

Մի՛ գարմանաք ուրեմն եթէ Ս. Պատրիարք Ազգեան այնքան վախկոտ է, և եթէ Պոլսոցի Հայն ալ կը վախնայ զայն վախկոտ կոչելու և աթոռէ դար իջիւր ըսելու :

Կ. Պոլիս, 25 Մայիս, 1893

ԽՈՌ

ՄԵՐ ՆՈՐ ԳՐԱՂՆԵՐՆ ԵՒ ԱՐԻԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ

«ՄԱՍԻՍ» ԵՒ ԳՐԱԲԱՐԻ ՈՒ ԱՇԽԱՐ-
ՀԱԲԱՐԻ ԽՆԴԻՐՆ

«Մասիս» շաբաթաթերթի Մեծայարգ խմբագիրն՝ Գրիգոր Զօհրապ՝ կը վերաբերի մեր նոր գրողներու այն զարգացեալ կարգին որ աշխարհաբար կամ արդի հայերէն գրաւոր լեզուաւ կը գրէ Փռանսերէնի հրապուրիչ շնորհօք : Այդ հայերէնի վերայ կը զմայլիմեն, և սակայն ա՛լ աւելի պիտի զմայլէի եթէ ոճոյ Փռանսական յատկութեանց լծորդեալ լինէին գրաբարեան ինչ ինչ շնորհք և :

Մեր գրողաց այդ նոր Գպրոցի գրական դաւանանքի մասն է, որպէս կ'երևի իրենց գրութեան կերպէն և Զօհրապայ յայտարարութենէն, զաշխարհաբարն իբրեւ բոլորովին ուրոյն և անջատ ի գրաբարէն նկատել, և սորա հիւթաբերութեանը անկարօտ համարել զնա :

«Մասիս» 1892 տարուան Յունիս 18ի թուոյն մէջ կը տեսնուի այդ յայտարարութիւն, Զօհրապայ ստորագրութեամբ, կարճ ու վճռական, որ ահաւասիկ. —

«Մասիսի խմբագրութիւն կը կարծէ որ այսուհետեւ գրաբարի և աշխարհաբարի խնդիր չկայ. կամ աւելի ճիշդ խօսելով գրաբարի խնդիր չի կայ :

Աշխարհաբարը գրաբարով կոկիւռ ջանքը լեզուագիտական սխալ մ'էր՝ ամուլ միալու դատապարտուած :

Աշխարհաբարը ուրոյն և անջատ լեզու մ'է զոր և ոչ մէկ կասկ կը միացնէ գրաբարին. բողբոսութիւնն անգամ աւելորդ երկուքին մէջ. իր բնական ոյժերը զորս ժողովրդական բարբառէն կը քաղէ, պէտք չեն թողուր անիմաստ փոխառութիւններ ընելու մեռեալ լեզուէ մը որ պատմական ըլլալէ ուրիշ նշանակութիւն չունի այսօր :

Մեր ժողովրդական լեզուն պիտի զարգանայ ուրեմն ինչպէս կը զարգանան ուրիշ ամեն լեզուներ ոչ թէ հինին դառնալով այլ այդ լեզուն խօսող հասարակ-

կութեան իմացական կարողութեան համեմատութեամբ:

Իւթիւնեան էֆէնտի բաղձանքը որ Օտեանի բաղձանքն էր արդէն, որ ապաքէն չատ մը միամիտ գրաբարագէտներու բաղձանքն է ուղղելու կարգի բերելու մեր աշխարհիկ լեզուն, յարգելի հնութիւն մը է: Լեզուները մարդոց պէս են, իրենց յատուկ ճակատագիրը ունին և պէտք է ունենան. յառաջդիմութիւնն առով կը ձեւանայ. աշխարհաբարը գրագէտներու ջանքով չը շինուեցաւ. իմաստասիրական անհուն խուզարկութիւններ չի պիտի Ենենք բացատրելու համար թէ ինչպէս կը կազմուին լեզուները, այլ կը բաւականանք յայտարարելով միանգամ ընդ միշտ որ գրական մարդիկ կը հպատակին և ոչ թէ կը տիրեն անոր, թերեւ իրենք իսկ չգգալով, և ժողովուրդն է միայն որ կը դարձնէ լեզուն կեանքի ամենօրեայ սալին վրայ, իր կամքին, պէտքին, գգացմանց ու հաճոյքին համեմատ:»

Առնունք այժմ ի քնին այդ վճիռներ մի ըստ միոջէ:

Ա.

«Մասիսի խմբագրութիւնը կը կարծէ որ այսուհետեւ զբարարի և աշխարհաբարի խմբիւր չի կայ, կամ աւելի ճիշդ խօսելով՝ զբարարի խմբիւր չկայ:»

Թէ կայ տակաւին գրաբարի և աշխարհաբարի խմբիւր, այնմ «Մասիս» թերթըն ինքն է լատգոյն վկայ: Յերբ աշխարհաբարի կերպաւորումն վերջնական վիճակի հասած չկրնայ նկատուիլ, պիտի ծեծուի հնոյն և նորոյն յարաբերութեանց խնդիրն, ինչպէս այսօր կը ծեծուի: Մասիսի զուր կը պահանջէ որ խմբիւրն լուծուած վերջացած համարուի մինչդեռ մտքերն վիճելու պէտք կը զգան:

Բ.

«Աշխարհաբարը զբարարով կոկելու ջանքը լեզուագիտական սխալ մ'էր՝ ամուլ մնալու դատապարտուած:»

Թէ զաշխարհաբարն գրաբարով կոկելու ջանքն հարկաւոր էր և բնաւ ամուլ մնալու չէր դատապարտուած, այնմ ևս Զօհրապայ և ընկերաց հայերէնն բաւական ապացոյց է: Կը բուէ որ Մասիսի խմբագրի-

րն կարգայ իւր վերի յայտարարութիւն տեսնելու համար թէ նոյն իսկ այն խօսքերն զորս կ'արտասանէ գրաբարին դէմ, գրաբարի շնորհիւ կարող է արտասանել: Այն աշխարհաբարին, զոր կը գրէ ինքն, բառերուն աւելի քան կէսն ուղղակի գրաբարէն քաղուած են, ոչ թէ «ժողովրդական բարբառէն»: Ո՞ր գաւառաբարառէն պիտի առնուր եթէ գրաբարէն չքաղէր այսուհետեւ, խմբիւր, ճիշդ, ամուլ, դատապարտել, ուրոյն, անջատ, բաղդատութիւն, քնակաւ, քար բառ, անիմաստ, փոխառութիւն, մշամակութիւն ևն ևն ևն բառերն, որովք չարագրած է այդ յայտարարութիւն: Ոչ թէ գրաբարով կոկուած միայն է, այլ և զգրաբարի առատ նիւթով շինուած յօրինուած է աշխարհաբարի հակայ չէնքն: Գրագէտներն ձեռք առին այն սղորմելի ժողովրդական բարբառն որ օտար տարրերով խառնուած այլասեռած՝ հազիւ հազ հայերէնի նմանութիւն մ'ունէր, գրաբարով ուղղեցին ազաւազումներն և գրաբար բառեր գրին տաճկերէններուն տեղ: Գրագէտներուն այս ջանքն փառաւոր արդիւնք ունեցաւ, որ է արդի գրական հայերէն լեզուն զոր կրթուած Զօհրապներ ա՛յնքան յօժարութեամբ կը գրեն որքան ախորժով կրթուած ընտանիքներ կը կարգան այսօր և կը խօսին, փոխանակ այն խեղճ թրքախառն անհեթեթ ճիւղակերպ լեզուին զոր խօսիլ իսկ ամօթ կը համարէին մեր փոքր ինչ կրթուած մեծունքն: Գրաբարեան գրագէտներու ջանից կը պարտիմք ուրեմն մեր արդի աշխարհաբարն, և պէտք է երախտագիտութեամբ խոստովանիմք թէ հայ ցեղն ու իւր ազգային լեզուն բոլորովին կորուստնելու վտանգէն ազատեցաւ նոցա ջանիւք, քանզի եթէ ժամանակին ընթացքին միայր, տակաւ թրքերէնն պիտի դառնար Հայոց լեզու:

Ուրեմն յոյժ սխալ է ըսել թէ ժողովրդական բարբառն պէտք չթողուր «անիմաստ փոխառութիւններ ընելու մեռեալ լեզուէ մը որ պատմական ըլլալէ զատ ուրիշ նշանակութիւն չունի» և թէ «աշխարհաբարը գրագէտներու ջանքով չշինուեցաւ», սխալ է, ա՛յո, քանզի գրագէտներու ջանքով եղաւ հայերէն լեզուի փրկութիւնն և կազմաւորումն: Առանց գրաբարի և զբարեբան զրազիտաց ջանքերուն արդի գրական հայերէնն ո՛չ գրական և ո՛չ հայերէն կը լինար:

Գ

«Աշխարհաբարը ուրոյն և անշտտ լեզու մ'է զոր և ոչ մէկ կապ կը միացնէ զրաբարին»

Նախնիքաց Հատուածով անուղղակի հերքուած է այս վճիռն ևս :

Սակայն կ'արժէ որ աշխարհաբարի ու գրաբարի առնչութեանց վերայ քննական աչքով նայինք վայրիկ մի :

Հայերէն լեզուն ունի հին գրաբար մի և հին աշխարհաբար մի, նոր գրաբար մի և նոր աշխարհաբար մի : Հաշիւէ դուրս կը ձգեմք այն միջին գրաբարն որ ոչ ևս էր գրաբար և այն միջին աշխարհաբարն որ չէ ևս էր աշխարհաբար :

Ինչ էր հին ընտիր գրաբարին առնչութիւնն հին աշխարհաբարին հետ : Այս հարց շատ հակաճառութեան առարկայ է ցայսօր : Կարծեմք կարելի է կարճ խորհրդածութեամբ մի պատասխանել այդ հարցի :

Հին գրաբարին, այսինքն այն գրաբարին զոր Եգիպտոս ոսկեղինիկ մատենագրութեանն կը ճանաչեմք, առնչութիւնն նոյն դարուն ժողովրդական լեզունն հետ : Իր ծնեալի առնչութիւնն ծնողին հետ : Մետրոպ և իւր աշխատակիցք հայերէն գիրն յօրինեցին, ո'չ լեզուն, կամ այբբենըն կատարելագործեցին՝ պահանքն լեզուննելով, բայց լեզունն վերայ չկատարեցին բնաւ այնպիսի հիմնական բարեփոխութիւն որպիսի կրած է ԺԹ դարուս մէջ հայ ռամկօրէնն գրաւոր լեզու լինելու համար : Ե գարունն ոսկեղինիկ շրջանին մէջ Հայաստան կար իրօք, Հայերով լեզուն և հայ կառավարութեան տակ, օտար աարբերէ երկիրն ու լեզուն գրեթէ ազատ էր՝ մանաւանդ կեդրոնական Նահանգաց մէջ : Ժողովրդական հայերէնն յայնժամ այլասեռած ու սղորմելի ռամկօրէն չէր նման մեր արդի ռամկօրէնին որ ինկած ու դարերով կոխտուած ժողովրդի մի ինկած ու կոխտուելով այլանշակած լեզուն է : Այնպէս լինելով յայնժամ հայ հայրենեաց ու լեզուի վիճակն, երբ առաջին ազգային մատենագրողք գրիչ ձեռք առին, գրեցին ազգին լեզուաւն ու ազգին համար : Մետրոպ, Սահակ և Եգնակ իրենց հայերէնն ոչ յերկնից իջուցին ոչ յոջնչէ յինչ բերին, և ոչ ալ գրեբերէ առին (վասն զի գիրք չկար դեռ) այլ առին Հայաստան Աշխարհէն, ուրեմն գրե-

ցին «հայերէն աշխարհաբար լեզուաւ : Եգնկայ լեզուն գրաբար չէր յայնժամ այն իմաստով որով այժմ է մեզի համար :

Մեր Ոսկեղինիկմատենագրաց լեզուն ոչ գրաբար, այլ գրական հայերէն էր, այսինքն զարգացած աշխարհաբար : Ինչ և ո'րքան կրնար լինիլ ուրեմն գրականին տարբերութիւնն ժողովրդականէն : Յայտնի է, նախ, թէ մարդ միշտ աւելի լաւ և կանոնաւոր կը գրէ քան կը խօսի, մանաւանդ գրելու արուեստին պարապող տաղանդաւոր մարդն : Մեր առաջին մատենագրողք բնականօրէն արտաոսովոր աւելնով և երկիւղածութեամբ միանգամայն կը գրէին, նոցա համար գրական և սրբազան միանգամայն էր գրելու աշխատութիւնն : Նոքա չէին կրնար ամեն հայերէն բառի և ոճի անխտիր մուտ տալ գրոց լեզունն մէջ, այլ այն ժամանակի արքունի և նախարարական շրջանաց մէջ տիրող ճաշակին համեմատ ինչ որ ագնիւ և բարձր էր, զայն նախամեծար պիտի համարէին : Կարելի չէր գրել շինականաց անմշակ լեզուաւն, պիտի գրէին բարձր դասուց, ազատորեն ու արքունեաց բաղդատաբար աւելի մշակուած հայերէնով :

Յայտնի է թէ գրական հայերէնն ժողովրդական հասարակ հայերէնէն պիտի տարբերէր նաեւ շնորհիւ այն պարագային զի մեր առաջին մատենագրողք հմուտ էին քան զիրենց լեզուն աւելի մշակուած օտար լեզուաց, մասնաւորապէս յունարէնի : Ուրեմն օտար լեզուններէ ներշնչուելով պիտի բարդէին հայերէն նոր բառեր և յերկրէին բացատրութեան նոր կերպեր : Չմոռնանք, սակայն, թէ այդ նոր բառեր ու նորօրինակ տառութիւններ շատ օտար չէին կրնար հնչել ժողովրդական ականջաց, քանզի արմատներն և կազմութեան ոգին ժողովրդական լեզունէն ի հարկէ կ'առնուին, քանի որ գիրք չկար դեռ :

Ուստի կ'եզրուկացնեմք թէ ոսկեղինիկ մատենագրութեան լեզուն իսկապէս ժամանակին աշխարհաբար հայերէնն էր, ժողովրդական բարբառէն ա'յնքան միայն տարբեր որքան գրադիտական ճաշակն և օտար լեզուաց հմտութիւնն կը գործէին :

Նկատենք այժմ ԺԹ դարուս գրական լեզունն յարաբերութիւնն իւր ժամանակի ռամկօրէնին հետ :

Արդէն ըսինք թէ մեր ռամկօրէնն

քայքայեալ Հայաստանի քայքայեալ* և աւերեալ Հայերէնն էր, Հայերէն կոչուելու գրեթէ անարժան: Երբ գրել պէտք եղաւ ժողովրդեան լեզուաւ, տեսնուեցաւ թէ բառերուն և առաջուածոց աւելի քան կէսըն թրքերէն է: Հայ ժողովուրդն կորուսած էր Հայ լեզուի մեծ մասն, և անհնար պիտի լինէր հայերէն լեզու կոչուելու արժանի լեզու մի յօրինել թէ հին ոսկեղինիկ մատենագրութեան, այն է հին մաքուր Հայերէնի գրական ամբարներուն չգիւժէր: Ուրեմն հարկ եղաւ «գրարար» կոչուած հին աղբային լեզուէն առնուլ, ոչ վասն զի գրարարն մեռած չէր, և ոչ վասն զի արդի Հայերէնն հին գրարարին վերածել պէտք էր, այլ վասն զի ուրիշ հնար չկար նորոյս անհուն պակասութիւնն լեցնելու և անհեթեթ աղաւաղումներն ուղղելու:

Այսպէս մեր արդի գրարար կամ գրական Հայերէնն մեծամեծ փոփոխութեանց շնորհիւ ժողովրդական այն անկեալ վիճակէն բարձրացած է ներկայ կատարելութեանն, և շատ աւելի կը տարբերի ժողովրդականէն քան հին գրարարն կը տարբերէր իւր ժամանակի ժողովրդականէն:

Կ'եզրակացնենք թէ արդի գրաւոր Հայերէնն յոյժ սերտ կապով կապուած է հին գրաւորին, և ինչպէս իւր բառերու մեծագոյն մասն և զարգացումն անկէ ըստացած է, պէտք է չարունակէ գեռ անով կոկուրիլ և անանիւ մինչև որ կորուսի, ճութութեան և ճշգրտութեան բարձրագոյն վիճակին հասնի:

Դ

«Գրական մարդիկ կը հպատակին և ոչ թէ քը տիրեն ամոր, ... և ժողովուրդն է միայն որ կը դարձնէ լեզուն կեանքի ամենօրեայ սալին վրայ»:

—Ո՛չ, ժողովուրդն չէ, այլ ժողովրդեան տաղանդաւոր մէկ փոքրամասնութիւնն է որ կը շինէ լեզուն, իսկ ժողովուրդն անկէ կ'ուսանի միայն, և գէշ կ'ուսանի և գէշ կը գործածէ:

Մեր այս կարծիք գուցէ առաջին տեսութեամբ արտառոց թուի, սակայն եթէ պահիկ մի քննուի պիտի երեւի բանաւոր:

Մարդկային լեզուն կամ լեզուներն չեն կրնար ամբողջ ժողովրդոց ստեղծա-

գործութիւնն լինիլ, այլ ուղեղի այս ինչ մասի բարձրագոյն զարգացումն ունեցող հանճարեղ անհատներու: Ժողովուրդը՝ ամեն բանի մէջ՝ իրենց բարձրագոյն տիպարն ներկայացունող անհատներու առաջնորդութեանն են հետեւած, և անոնց նմանելու աշխատելով մարդ եղած են:

Առաջին պարզագոյն արհեստներն, պարզագոյն գործիներն հնարուած են, նախնական զաղափարներն ըմբռնուած, երաժշտութեան, բանաստեղծութեան, գիտութեան և իմաստասիրութեան, կառավարութեան և օրէնսդրութեան, ի մի բան, ամենայն ճարտարութեան նախափորձերն կատարուած են ո՛չ ժողովրդեան՝ այլ անոր գործութեանց գերագոյն մարմնացումն եղող հանճարներու ձեռքով:

Լեզուն ալ նոյնքան մեծ գործի մի, մեծ արհեստ ու մեծ ստեղծագործութիւն մ'է, և անոր ալ յօրինիչն ու դարձնիչը ժողովրդեան այն բացառիկ զաւակներն եղած են անչուշտ որք հանճար կը կոչուին: Մի քանիներ կը ստեղծեն ու բազմութիւնն կ'ուսանի, կը գործածէ ու կը վայելէ:

Հանճարեղ անհատներ կը ստեղծեն լեզուն, և դարձեալ տաղանդաւոր անհատներն, գլխաւորապէս գրաւորեալ, են որ կը մշակեն ու կը զարգացունեն դայն դարէ ի դար:

Լեզուն, աննման ուրիշ գործիներու, ամեն մարդու պիտայից կը ծառայէ, վասն որոյ և աւելի քան ուրիշ գործիներ խանգարմանց նշաւակ է, անգիր ժամանակներու մէջ բանաստեղծք, երգիչք, քուրմք, արքունի պաշտօնեայք կը խնամեն լեզուն, և գրաւոր ժամանակներ՝ գրողքեք:

Ինչպէս որ անխնամ պարտէզ մի տակաւ կը խապանանայ, և ինչպէս որ անխնամ վարդենին ամ ըստ ամէ կրելով յետագէմ շրջափոխութիւն՝ վերջապէս միայն միաթերթ վայրի վարդ կ'ընծայէ, այնպէս ալ ամեն մարդկային ջանից և կըրթութեան արդիւնք, ազնուութիւն, արուժիւն, գեղեցկութիւն, արհեստ, ճարտարութիւն և մանաւանդ լեզու, եթէ բնական ընթացքին թողուին, եթէ յատուկ հոգածութեան առարկայ չլինին շարունակ, ետ ետ կ'երթան, կը պարզուին, կը կոշտանան, կը վայրենանան ու կը քայքային:

Անցեալի պատմութիւնն ամեն իրօք

կ'ապացուցանէ զայն :

Մանաւանդ այն ատեն լեզու մի արագապէս կը խանգարի երբ զայն խօսող ժողովուրդն թշուառութեան և քաղաքական երկարատե անկման դառապարտութիւններէ պարագայից մէջ խորհելու, խօսելու և գրելու արհեստին դրաղողներն կը պակսին ապա մէջէն, լեզուն կը մնայ ժողովրդէն բնական անխնամ լեզու, քին, և սոսկալի կերպիւ կ'այլանալ :

Այդպէս եղած է հայերէն լեզուի ալ դժբաղդութիւնն :

Ե դարու վերջերէն մինչև ԺԹի սկիզբներն յընթաց 13 դարուց, հազիւ երբէք դարբնող եղած է մեր լեզուն, այլ միշտ ժողովուրդն ծամած ու ծռած է զայն, իւր թշուառ գոյութեան նման ընդ քարշ տարած և գանգանած է զայն չարաչար, վիրաւորած, կոտորած, ճմլած :

Ճմլուած, սեղմուած և կոտորած բառերն և խանգարեալ համաձայնութիւններն այն աստիճանին հասած են որ բառերու դիմագծութիւնն յաճախ աւրած է և սկսած են իրարու նմանիլ, ինչ որ լեզուի բուն նպատակին հակառակ է : Մի քանի օրինակօք բացատրենք զայս մեր այլ և այլ գաւառաբարբառներէն :

ՄԱՆԻՆ՝ Թէ մանիլ է և Թէ նմանիլ : — արեւը մանեցաւ . ո՞վ կու մանի :

ՓՇԵՆ՝ Թէ փշով պատել է և Թէ փշրել :

ԲՈՒՆ՝ բուռով ծեփել և փնտռել :

ԻՐ՝ իր և իւր :

ԴԻՐ՝ դիր և դիր :

ՁԻՆ՝ ձին և ձիւն :

ԱՐԻՆ՝ արի եղողն և արիւն :

ՍԻՆ՝ սնտոի և սիւն :

ԾԱՌՈՒԹԻՒՆ՝ ծառ և ծառայ արմատներէն :

ՀՈՂԵՐՆԻՍ՝ կը նշանակէ մեր հողն և մեր հողերն :

ԳՈՐԾԻՔՍ՝ կը ցուցնէ իմ գործիքս և այս գործիքը :

ՏՈՒՆԸ՝ ուղղական ալ է, հայցական ալ, տրական ալ, դադարում ալ, չարժուում ալ, կը նշանակէ այն տունը և զայն տուն, իւր տունը և զիւր տուն, և տանը մէջ :

ԳՐԱԾ ՆԱՄՍԿԻ՝ կը նշանակէ նամակը զոր կը գրես, զոր կը գրէիր, զոր գրեցիր, զոր գրեի ես, զոր գրած ես, զոր գը-

րած էիր :

Նաև ժողովուրդն դարէ ի դար ճմլելով և կոտորելով եղանիւն ըրեր է ԸԼԼԵԼ, դտանելն՝ գննել, անցանելն՝ օսնիլ, կանգնելն՝ կոյնիլ, կոտորելն՝ կոյել, ուղարկելն՝ խրկել :

Հարկւրաւոր և հազարաւոր են այդպիսի աղաւաղեալ բառեր մեր ռամկօրէնին, որ ոչ Թէ սալի վերայ դարբնեալ ու ճարտարեալ, այլ մեծ բարձրութենէ վար ինկած գործի մի կը յիշեցունէ որ չափազանց ճմլուածն այլ ևս անճանաչալի դարձեր է :

Ուրեմն, կ'ըսենք, անմշակ ժողովուրդն կը ծամածռէ լեզուն և կ'աղաւաղէ, մերկացնելով զայն իւր փափուկ երանգներէն, հոմանիշներէն, պէսպիսութիւններէն և ճշգրտութենէն : Գրական մարդոց անդուլ հսկողութեան և դարմանին տէտք կայ որպէս զի լեզուն չափազանց չխանգարի, այլ մշակեալ ճաշակի համեմատ շարունակ վերանորոգի ուղղուի և զարգանայ :

Գրական մարդիկ ռամկաց ուղղութեան չեն կրնար հետեւիլ, ընդհակառակն՝ նոցա առաջնորդելու պաշտօն և իրաւունք ունին :

Ե

Յայտնի է, սակայն, թէ գրական մարդոց ազդեցութիւնն ամենազօր չէ, և սոցա լեզուական բարեկարգութիւնք ալ չափ և սահման ունին : Օրինակի համար հնար չկայ որ հայ գրագէտք արդի գրական հայերէնն բոլորովին գրաբարի վերածեն աստիճանաբար, նախ վասն զի լեզուին աղաւաղումներն՝ մինչև այսինչ աստիճան՝ բնական շրջափոխութիւն են և անխուսափելի, երկրորդ՝ վասն զի գրաբարն, որպէս կը խօսուէր այն ի Ե դարու, ամբողջովին ծանօթ չէ, և երրորդ՝ վասն զի աշխարհաբարն ունի ինչ ինչ գնահատելի առաւելութիւններ գրաբարին վերայ :

Հա'ւ, պիտի ըսէ ընթերցողն, ուրեմն ի՞նչ էք դուք, գրաբարեան թէ աշխարհաբարեան :

— Կը պատասխանեմք — աշխարհաբարեան, բայց պայմանաւ : Աշխարհաբարի՝ իբրեւ արդի հայերէնի՝ հիմնական հանգամանքն պէտք է յարգուին, գաւառաբարբառներու հայկական գանձը նոյն լեզուին

մէջ մտցունին, բայց խոշոր աղաւաղութիւններն ու խոշոր տաճկաբանութիւններն գրաւարի օգնութեամբ ուղղուն, հայացուն, և ինչ որ կը պակսի դեռ աշխարհաբարին՝ լեցունի գրաբարի օգնութեամբ, ինչպէս ցարդ եղած է:

Հայ գրագէտն չպարտի գրաբար երկաւորել, բայց պարտի քաջ հմտանալ գրաբարին: Գրաբարի խորագէտ չհմտացած ոմանք կան որ լաւ աշխարհաբար կը գրեն, բայց լաւագոյն աշխարհաբարն միշտ անոնք պիտի գրեն որք, ուրիշ պայմաններ հաւասար լինելով, գրաբարի քաջ հմուտ են:

Վարժարանաց մէջ աշխարհաբարի վերայ պէտք է աւանդել քերականութեան սկզբունքն, և յետոյ, բարձր կարգաց մէջ միայն գրաբարն դաս տալ: Գրաբարի խոր ուսումն անհրաժեշտ պէտք մ'է հայ գրողին համար, նոյն իսկ գիտական գրողին, քանզի սա ալ նոր բառեր յօրինելու ըստիպուած լինելով՝ պարտաւոր է ներկուս լինիլ գրաբարին:

Ե... ՓԻԼԻՍՈՓՈՍՖԻ

ԳՐԱԿԱՆ ՆՇԽԱՐՆԵՐԷՆ

(Դարուս առաջին կիսուն մէջ ծաղկած գաւառացի հայ խորհող մի, որ Ե... փիլիսոփայ անուանեալ է, ունի ձեռագրեր, որոնցմէ ինչ ինչ կտորներ գտեր օրինակեր է հետաքրքիր գրասէր ոմն և մեզ յղեր է իրրեւ հետաքրքրական ինչ: Թէ Օսմանեան պետութեան փրկութեան պայմաններուն վերայ ինչ էին այն ժամանակի խորհողաց տեսութիւնն և որպիսի հայերէնով կը գրէին շատեր, զայդ կը տեսնեն ընթերցողք Ե... փիլիսոփայի գրուածոց հետեւեալ նմուշէն: Գրուածն իբրեւ խորհրդատուի թուղթ է յղեալ առ Սուլթան Մէճիտ:)

«Թագաւոր,

Ձեր մեծանուն ժողովրդասէր Հայրը, Սուլթան Մահմուտը ըստ թէ պէտք է որ օր մը իմ ժողովուրդս ամենը մէկ և հաւասար ըլլան: Դուք ատ Հաթիթի Շէրիֆը հրամեւով, որ կ'ըսուի կիւլ Հանէ, փորձով ցուցուցիք, որ ատ հախ և շիտակ ուղածը և ըսածը ըլլայ և կատարուի: Լաքին ատ այնպէս մնաց եամ ետսի, թղթի վրայ, հարիւր հոգիէն մէկը չի լսեց, հողար հոգիէն մէկը չի հասկ-

ցաւ: ... Ահա կործանեալ տէրութեանց պատմութիւնները դիմացնիս անժխտելի իսպառ են: Միթէ քուկի՞նդ միայն ուրիշ թարգ վերջ մը պիտի ունենայ: Աս կ'ըսեմ պիտի ըլլայ, և չուշանար որ ձեր թախտը, Օսմանեան Տունը, իսլամի աշակերտներով՝ փլչին մէյտեղ խորխորատը ըյնին, ուսկից յախտեանս չելլեն: Աս որ չէք ուզեր, ուրեմն միաք դիր, ո՛վ ազնուական զաւակ Մահմուտի, մեծ և բարեսէր թագաւորին, ... ու՛ր ազատութիւն ան միլիոնաւոր ժողովրդաց որոնց դուք կ'ըսէք ըայէ. ջնջի՛ր անհետ ըլլայ այս ամօթալի սուտ անունը բերնբերէդ և գըրբերէն, որ անոնք ակտէկ, ուժ և կարողութիւն ըլլան քեզի ամեն բանի մէջ, քու Տաճիկ ազգիդ սրան դիր, որ միևնոյն հայրենեաց և երկրի ռահաթ բնակիչ ըլլան և պաշտպան, և մի հաւաւար քաղաքացի. գրէմ ի միաբանութեան է ուժը: Ֆէրման հանէ հրատարակէ այս չորս հիմնական և առաջին սկզբունքը եւ քանոնները որոնց վրան թագաւորութիւնդ պաշտպան կանգնել և աւերակները թէմիզցնել. թէ 1. Բաղադրական կենցաղական օրէնք ամենուն մէկ և հաւասար: 2. Հաւասար և կըրօնք ամենեցուն ազատ հաւասար: 3. Մարմնաւոր կառավարութիւն զատ ըլլայ հոգեւորէն: 4. Օտարազգիք միւլքի վախճի սէր թող ըլլան ազգիդ մէջ: Աս որ ընես քիչ տեսնէն տեսնես զարմանաւ, որ բոլոր բովանդակ երկիրդ սազվի շինուի, որ մէկին տեղը յիշուի հարիւր պտղաբերէ, և իրազնէդ թաշմիշ ըլլայ, չէ թէ հիմակուան պէս տակը երևնայ:

... Աւստով որ ձեր բարձր խոհեմութիւնը և հայրազութ սէրը, որ ունիք Տաճիկն, Հայուն, Հոռմին և Հրէին վրայ, կ'ուզէք և ջահտ կ'ընէք հաստատութեամբ ընել կատարել ան թագաւորաւայել և մեծ խօսքը և վտակէթը թէ պէտք է որ իմ ժողովուրդս օր մը ամենը մէկ և հաւասար ըլլան. Տաճիկը ճամին տաճիկ է, Գրիստոնեայն ժամը քրիստոնեայ է. Հրէան սինովան հրէայ է. անկէ դուրս ամենը մէկ հաւասար իմ զաւակներս են և եղբարք: Երնէկ ժողովրդիդ որ քու օրդ այս պայծառ անուշ օրը տեսնեն, երնէկ թախտիդ և թագաւորութեանդ որ ծագի երեւնայ ամպերուն տակէն ելած ոռպակ երկրորդին պէս: Ն. և պատրաստական ծառայ:» * * *

(Թուական չկայ ձեռագրին մէջ)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՄՈՒՄՆՈՒԹԵԼՆ ԽՆԴԻՐ

ճկաստանէն մայր մի կը գրէ առ
Ի արդին ի Պոսթոն :

Միրէլի Որդեակն ,

Սիրոյ նամակդ առինք . ողջութեանդ լրոջն չատ ուրախ եղանք : Աստուած ի պանդխտութեան տեղդ բարի աջողութիւն տայ և վերստին տեսութեան արժանի ընէ . ամէն :

Սիրելի՛ս, ան որ Մանուշակին համար
գրած ես թէ դեռ պզտիկ է, կարգելու
տարիքը չէ, կ'երեւի թէ մեր երկրին սո-
վորութիւնները մոռցեր ես որ ատանի
կը գրես: Գարունն 15ը կը լնին՝ 16ը կը
մտնէ: Եւ ան երեք տարի առաջուան
Մանուշակը չէ, մեծցեր, գիրցեր, երկն-
ցեր է (մաշալլահ): Բան զԳարեգինը ա-
ղէկի՞ն պիտի տանք: Դուն աղէկ գիտես
որ չատերը 14ին մէջ կը կարգեն, բայց
մենք անցեալ տարի պզտիկ է ըսելով
չտուինք: Հօրեղբայրդ կիրակի օրն եկած
էր, նամակդ կարդաց. կ'ըսէ թէ Ստե-
փանը Ամերիկացի եղբր լնինք է. ան տե-
ղաց խոշոր խոշոր աղջիկները տեսեր է,
կարծեր է թէ հոս ալ անանի կրնայ լինիլ:
Մօրքրտաւդդ ալ չատ յարմար կը տես-
նեն: Դեռ խօսքը չենք վերջացուցեր,
բայց օրերս կայանք մը պիտի տանք: Ե-
րեք ամիս հարսնացու պիտի մնայ: Երանի
թէ հոս լինէիր ու հարսնիքը վայելէիր:
Ի՞նչ ընենք, Աստուած ողջ պահէ, չու-
տով հայրենիք վերադառնաւ, քեզ ալ
կարգենք, քուկ ալ թագդ ու պսակդ
համրուրենք:

Վահանն ալ աղէկ է, դպրոց կ'երթայ: Բսլոր բարեկամներ շատ բարե կ'ընեն թագուհի մօրքոյրդ ալ այսօր մերն է, յատուկ բարե ունի: Գիրդ անպակաս ընես:

Կարօտակէզ մայրիկդ

3 Ապրիլ, 1893

* * *

ՊՍՏԱՍԽԱՆ

Պոսթոն, 5 Յալիս 1893

Սիրեւի Մայրիկ իմ,

Այսօր ստացայ ձեր նամակը, և շատ բարկացեր եմ: Ձեզի խօսք Հասկցնել դժուար է եղեր: Ի՞նչ ըսեմ, եթէ բոլոր խորհուրդներս գրեմ, դուք ալ ինծի կը բարկանաք: Երանի՜ թէ չբարկանայիք, և ես գրէի ինչ որ ուղիղ է, բայց չգրեւ չեմ կրնար, թէպէտ բարկանաք:

Մայրի՛կ, դու զՄանուշակ կը սիրե՞տ,
Հարկաւ, տարակոյտ չկայ: Եթէ՛ք ըսեմ
«չես սիրեր, կ'ատես», վրաս պիտի խն-
տաս: Քոյրս նոր սկսեր է խեղճ բոլորել,
դպրոցէն ու գրքերէն բան հասկնալ, մը
տօք զարգանալ, սրտով հասուննալ, մարմ-
նով ուժովնալ, և դուք կ'ուզէ՞ք զինքը
աշխարհային հոգերու և նեղութեանց փը-
շերուն մէջ նետել ահա ձեր սէրը: Պէտք
է էրիկ չահի, կեսուր ու պարնտատ ու-
նենայ գլխուն գոռացող, հարիւր մեծ ու
պզտիկ աղաներու և խաթուններու ծա-
ռայէ իբրեւ խոնարհ հարսնուկ, շարու-
նակ վեր վազէ, վար վազէ, չարաչար
աշխատի, նեղուի, յաճիրմանուի, և մուռ-
անէ, միշտ նկուն միշտ հեզ... և տարի
ջանցած ահա ուրիշ կարգ մի նեղութիւն-
ներ, ներքին նեղութիւններ: Եւ ահա ե-
րախայ մի որ կաթ կուզէ, որ գիշերն կը
ճէ՛ք, արթուն կը մնայ և արթուն կը պահէ
իւր փոքրիկ մայրը: այն 16 տարեկան աղջի-
կը որ ինքն իսկ դեռ կարօտ էր շատ քնա-
նալու, առատ սնունդի, արագ մեծնալու,
այժմ ինքն իւր քուն, իւր արիւն, իւր ա-
ճում պէտք է զոհէ երախային: և ինքն
այլ ևս գրեթէ չմեծնայ:

Սիրելի մայրիկ, դու լաւ գիտես որ եթէ դեռ ահուայ չհանած երախային միտ, իւզ, հաց կերցունեն, կը հիւանդանայ և կը մեռնի, վասն զի չկրնար մարտնել. դեռ անոր ներքին մարսողական գործարաններն պատրաստ չեն ատանկ բաներ մարտնելու: Ըոեւ կուզեմ թէ ամեն բանին ժամանակը կայ: 6 ամսուան երախային չէ կարելի կերցունել ինչ որ վեց տարեկան տղուն կրնայ տրուիլ. նոյնպէս ալ 6 տարեկան տղուն ձեռքը քերականութիւն չի տրուիր. և ոչ ալ 16 տարեկան աղջկան կը յանձնուի ոյնպիսի պաշտօն որ 20 տարեկան եղողին կը վայել: Մեր մեծերն

չափ սխալ բաներ ըրեր են չգիտութեամբ բայց մենք որ աւելի լուսաւորուած ենք, կը մեղանչենք եթէ անոնց սխալներն կրկնենք: Կը մեղանչենք, այո՛, քանզի Աստուծոյ կամքին հակառակ գործած կը լինինք երբ 15—16 տարեկան աղջիկներ տամուսնացնենք: Աղջիկ մը որ դեռ ինքն իրեն հոգ տանիլ չգիտէ ըստ արժանւոյն, ի՞նչ պէս կրնայ զաւակաց խնամ տանիլ: Այն որ ինքն դեռ մարմնապէս և հոգեպէս կազմուած չէ, այն՝ որուն Ֆիզիքական և բարոյական չէնք լինցած չէ, ինչ պէս կրնայ զաւակներ շինելու զբաղիլ: Մայրի՛կ, կը յուսամ խօսքերս անհասկանալի չեն: Միթէ տակաւին շինուելու վերայ եղող անաւարտ տուն մի բնակելու կը յարմարի: Միթէ մէկ տարեկան ձիուն վրայ հեծնել կամ աւանակին բեռ բեռցունել անգթութիւն չէ: Ներեցէք օրինակիս անպատշաճութեանը, բայց չգիտեմ ինչ ուրիշ օրինակ կրնայի տալ որ լաւ հասկնայիք: Միթէ վարդը կը քաղեն դեռ չբացուած, կամ թէ պտուղն կ'ուտուի՞ դեռ չհասած: Մեղք չէ: Եւ ուտողին ալ վնաս չէ: Մեր ազգին ցաւերուն մէկ մեծ պատճառն այդ է ահա — խալ պտուղ չափ ուտելն: Որքան հարսներ մեռեր են վաղաժամ ամուսնութեան պատճառաւ. ո՞րքան տղայք փոքրիկ, տկար ծըներ են, և փոքր մնացեր են, վասն զի անչափահաս մօր պտուղն եղած են: Երբ կիւրին ու Սերաստիա գացի մեծ հաճութեամբ տեսայ թէ աղջիկներն 18—20 տարեկան չեղած չեն կարգեր, և ժողովուրդը ալ աւելի լաւ զարգացած է մարմնապէս, կիներ, մարդիկ խոշոր և առքեւի են:

Տէր Յովհաննէս քահանային ալ այսօր ես նամակ ունիմ գրել: Պիտի երգմնցունեմ զինքը որ քոյրս չպսակէ: Պիտի բացատրեմ իրեն թէ մեծ մեղք կը գործէ երբ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ 15 տարեկան աղջիկ մի կին ամուսին կ'անուանէ և էրկան ձեռք կը յանձնէ: Ամենեւի՛ն, ամենեւի՛ն Աստուած այդպիսի բան չկամենար: Աստուած անգութ չէ: Եւ ոչ ոք իրաւունք ունի յանուն Երկնաւորին այդպիսի անազորոյն վճիռ արձակել: Տ. Յովհաննէս քահանայն աստուածավախ մարդ է, և վստահ եմ թէ այս բանն ի միտ առնելով պիտի զարհուրի և այլ ևս երբէք չպիտի 18 տարին չբողորած

աղջիկ պսակէ:

Մանուշակին ալ պիտի գրեմ հիմա. նմա ալ պիտի հասկցունեմ թէ այս մասին իւր պարտաւորութիւնն է անհնազանդ լինիլ ձեզ, քանզի ամենուս պարտքն է Աստուծոյ կամաց նախ և առաջ հնազանդիլ: Եւ եթէ Մանուշակ այն Մանուշակն է որ ես գիտեմ, չպիտի ուղէ ըստ օրինակի ուրիշ ազգաւ աղջիկներու երթալ պսակուիլ՝ մարթուելու տարուող զառնուկի պէս ճշելով...:

Կը յուսամ թէ դու, սիրելի և անձկալի մայրիկս, այս ամենն կը հասկնաս այս անգամ, և ամեն դժուարութեան տուլիս կ'առնուտ միանգամ ըսելով — Ո՛չ Մանուշակը կ'արգելու ժամանակ չէ դեռ. թող գտնէ 18 տարեկան լինի:

Եւ ես ո՞րքան պիտի ցնծամ երբ պատասխան առնում թէ այդպէս ալ որոշած էք:

Աստուծոյ սիրուն թող լինի, մայրիկ, մի՛ մերժէք խնդիրքս: Օրինակ եղէք ուրիշներուն:

Ձերմ համբուրիւ մնամ որդեակդ
Ստեփան Վարդապետեան

Քաղաքական

Ազգային

ԵՒ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Մայիս 31ին կը հեռագրեն Կ. Պոլսէն առ Տէյլի Նիւզ Լոնտոնի. —

«Կայսերական հրովարտակ մի հրատարակեցաւ այսօր, վերադարձունելով առ Սրբ. Խրիմեան, Գրիգորեան արքեպիսկոպոս երոստաղէմի, որ անցեալ Մայիսին Հայոց եկեղեցւոյ կաթողիկոս ընտրուած էր, իւր իրաւունքն իրեն օսմանեան հպատակ, յորոց զրկած էր զինքն թուրք կառավարութիւնն Կ. Պոլսոյ Պատրիարքական գահէն իյնալու ատեն: Սրբ. Խրիմեան ընդ հուպ ճամբայ պիտի ելնէ Էջմիածին երթալու:»

Վերի հեռագրին անճշգրտութիւններն նշանակել աւելորդ կը համարուիք:

Նոյն թերթին կ'ուղղեն հետեւեալ հեռագիրն Վիեննայէն, Մայիս 30 ին:

Վստահելի տեղեկութեանց համեմատ ֆնկիւրի կառավարիչն խորհուրդ տուեր է Դրան կա'մ հնար գտնել Հայոց դատն անպայման ժամանակաւ յետաձգելու, կա'մ բոլորովին լքանելու դատավարութիւնն, արձակելով բոլոր բանդարկեալներն ի հարկին: Կառավարիչն պնդած է եղեր այսպէս ընելու հարկին վերայ այն երկուշիւ թէ մեծ գայթակղութիւն յառաջ կրնայ գալ այդ Հայերն խօսեցունենէ հրապարակային դատաստանի մէջ ի ներկայութեան օտար դեսպաններու ներկայացուցչաց: Կը կառոճուի թէ բոլոր ամբաստանեալք պատրաստ են ազատօրէն խօստովանելու իրենց մասնակցութիւնն ի ժխտի և յապտամբական գործս, բայց պիտի յայտարարեն ալ թէ իրենք ստիպուած էին այդ ընթացքի հետեւելու՝ մեղեալ թրքական անտանելի հարստահարութիւններէ և պաշտօնէից յռի վարչութեանէն:»

*

* *

Միացեալ Նահանգաց գաղթականութեանց վերատեսուչն կ'ուղէ եղեր որ առաջին և երկրորդ կարգի ուղեւորներն ալ երրորդ կարգիներուն պէս քննութեան ենթարկուին այսուհետեւ. բայց լրացիրներն աւելորդ և անճաշ կը համարին այդպիսի ձանձրալի քննութիւն:

*

* *

Տ. Մ. Պ. Ծ. կը գրէ Ուսթըրէ—

«Հայքի 10դ թիւի Ազգային Քաղաքականութիւնն աննման և հիանալի գտայ: Բոլորովին կը համամտիմ տեսութեանդ:

Պոսթընէ Տ. Պ. Ք. կը գրէ— «Ազգային Քաղաքականութեան վրայ ձեր գրած խմբագրականը շատերը համոզման բերած է հոս:»

*

* *

Պոսթընէն Յունիո 9 թուականով կը գրէ մեզ Տիար Սիլիւի.—

Կը փութամ Ձեզ և Ձեր միջոցաւ հանրութեան յայտնել թէ գլխաւոր սկզբունքն ազգային քաղաքականութեան զոր կը պարզէք «Հայք»ի վերջին թուոյ մէջ, կը

վայելեն իմ լիովին հաւանութիւն: Գիտէք թէ Կեդ. Յանձնախմբի մը անհրաժեշտութեան որպէս և գործնական դիւրութեան հաւատացող եմ և յուսամ «Հայք» կը քարոզէ զայդ մինչև ընդհանուր համալուսմ գոյանայ: Յուսալով ուրիշ պատեհ առթիւ երկարագոյն գրել մնամ ձեռն այժմ էն:

*

* *

Փորձառու թղթակից մի կը գրէ մեզ հետեւեալ սուղերն «Հայք»ի վերջին թուոյ մէջ յօդուածին առթիւ.—

Թող Ամերիկայի Հայ երիտասարդք ջանան ամուսնանալ առանց երկնչելու դժուարութիւններէ որ պակաս պիտի ըլլայ քան որ գուցէ լինի ամուրի մնալով: Իրենց յարմարներն եթէ աստ չեն գտներ, Թող դիմեն վստահելի անձանձ ի Տաճկաստան, ըսենք, որք իրենց իմաստութեամբ կրնան յարմարներն իրարու ծանօթացնել նամակաւ և լուսանկարով: Այսպէս կ'ըլլայ կէս նշանաւորք, կ'ուղարկէ նշանածցուն գալու ճանապարհածախքը, օրիորդը կուգայ, անձամբ կը տեսնուին: Եթէ յարմար եղան՝ կը պսակուին, եթէ ոչ՝ մէկուն ստակը միսին պանդխտելը կ'ըլլայ հաւասար փոխարինութիւն: Թող երկուքն ալ իրենց յարմարները փնտռեն:

*

* *

Կը հաշուեն թէ 4,965 հանապազօրեայ լրագիր կը հրատարակուի բովանդակ աշխարհի մէջ, որոց առաւել քան մէկ երրորդն ի Միացեալ Նահանգս: Մեծն Բրիտանիա ունի 200 օրաթերթ, և Փարիզ հրատարակուող թերթերու թիւն է 141: Չինաստան, աւելի քան 400 միլիոն բնակչօքն, 10 օրաթերթ միայն ունի, և 14 ալ ուրիշ ամեն կարգի թերթ, ընդամենն 24: Հայերն 4 միլիոն միայն են, բայց ունին նոյնպէս 24 թերթ:

* *

* *

Նիւ Եորք քաղաքն ունի 49 օրաթերթ, Շիքակոյ՝ 27, Ֆիլատէլֆիա՝ 22, Պրուքլին՝ 6, Ս. Լուի՝ 12, Պոսթոն՝ 11, Պայթիմոր՝ 8: Աւելի քան 400,000 բնակիչ ունեցող քաղաքներն աստոնք միայն են:

ՀԱՄԻՏԻՅԷ ՀԵՆԵԼԱԳՈՒՆԴԵՐ. — Դ. զօրաբանակի միրիլիվաներէն Հագգը Փաշա, իրեն հետևորդ սպաներով, Զօր գաւառը ժամանած է, ուր սկսած է հարկ եղածն ի գործ դնել տեղւոյն Աշրէթներէն Համիտիյէ հեծեղազուններ կազմակերպելու համար:

Եւսէնի նահանգին մէջ անդորրութիւնն ու ապահովութիւնն աւելի հաստատելու (իմա՝ ապստամբութիւնն վերջացունելու) մասին բարեք ծառայութիւններ մատուցանող զինուորաց և այլոց տրուելու համար կայս. իրաւէով շքադրամներ պիտի պատրաստուին: Այդ շքադրամներու նմոշները մատուցուած են վեհ. Սուլթանին, որ հրամայած է պէտք եղածին չափ պատրաստել և անոնցմէ երեքն իրեն մատուցանել:

Պետական խորհուրդը որոշած է որ երբ բժշկական վարժարանի քաղաքային ճիւղին մէջ ուսանող բժիշկ մը չուզէ ըստանձնել գաւառաց մէջ քաղաքային բժշկի պաշտօնը, վկայականը ձեռքէն առնուի, իբրեւ վարժարանի ծախք իւրաքանչիւր տարւոյ համար տասնական ոսկի գանձուի իրմէ և մայրաքաղաքի մէջ պաշտօնի չկոչուի: (Կեցցէ՛ ազատութիւն):

ԱՐԵՒԵԼՔ

* *

Պոսթոնէն, Տիար Ս. Պ. Մ. կը գրէ— «Մալըմ Ուըրլաի» խմբագիրն ի՞նչ պիտի կրնայ ըսել երբ ապացոյց ուզուի իրմէ հաստատելու թէ Հայերն են հարստահարեր Թրքերն մինչև այժմ: Մեր և Թրքաց յարաբերութեանց մասին իւր յանդուգն տգիտութիւն կը ցուցնէ թէ իւր դաւանած նոր կրօնքն ալ ծանծաղ տեղեկութեանց վրայ ընդունած ըլլալու է: Ինքը խաղաղութիւն կը մաղթէ իսլամի հետեւողաց, ևս ալ իրեն կը մաղթեմ խղճմտանք և խելք:

* *

1870ին Եւրոպա իբր 3 հազար միլիոն Փրանք կը նուիրէր պատերազմական պատրաստութեանց, ի ներկայիս՝ նոյն նպատակաւ եղած տարեկան ծախքն է Հինգ հազար միլիոն Փրանք: 1870ին Եւրոպա կը պահէր իբր երկու միլիոն զինուոր, ի ներկայիս՝ կը պահէ աւելի քան երեք միլիոն ու կէս: 1870ին Եւրոպա կը հաշուէր թէ, ի դիպել պատերազմի, կրնայ հանել

առ առաւելն՝ եօթն միլիոն մարդ. այսօր կրնայ հանել 12 միլիոն ու կէս, և իւր օրէնսդրութիւն կը միտի հասցունել այդ թիւն ի 22 միլիոն:

*

* *

Ներկայ թուով «Հայք» ի ներկայ տարեշրջանն կէս եղած լինելով՝ փափաքողք կրնան մէկ թալէս վճարելով տարւոյն մը նացեալ վեց ամսոց համար բաժանորդ գրուիլ:

Կը յիշենք թէ բաժանորդագրութիւնք կանխիկ պէտք է վճարուին:

Դիւրին է մէկ թալէսի փոխանէն փոսթ սթէմփ յղել նամակի ծոցով:

*

* *

Կ. Պոլսոյ Ռոպէրդեան գոլէժի աշակերտք Ամերիկացւոց պէյսպօլ խաղն մեծ ճարտարութեամբ կը խաղան: Անցեալ տարի Հայ և Պուլկար ուսանողաց ժիջե մրցում մ'եղեր է, յորում Հայք յաղթող հանդիսացած են:

—Մայիս 5ին Մալաթիոյ մէջ երկրաշարժի թեթեւ ցնցում մի զգացուած է: Նոյն օր Վանայ և Կեսովաշի մէջ ևս երկրաշարժի թեթեւ ցնցումներ տեղի ունեցած են:

—Յափանց Եփրատայ լուր կը հասնի որ չափ մի ցորենը հարիւր դահեկանի ելած է, և այն ալ չգանուի բաւական: Սովորական դինն է 60—70 դահեկան: Մեծ խեղճութիւն կը տիրէ տղքատութեան երեսին: Ամեն յոյս նոր հունձքին վերայ է և անձրեւը առատ:

—Մէքքէյի մէջ հնտախտն սաստկացեր է. մէկ օրն մինչև եօթանասուն հոգի մեռեր է:

—Ֆռանսայի մէջ հնտախտի դէպքեր պատահած լինելով՝ Թուրքիա գառանթիւնա յայտարարեր է ի Մարսիլիոյ հասնող նաւերու դէմ:

—Հայրենակից մի կը խնդրէ մենէ «Հայք» միջոցաւ հարցնել թէ Պարոն Թորոյ Թորոյեան անուն անձն ո՞ւր է այժմ (Լիւնի մէջ ծանօթներ ունի եղեր), քանզի անոր անունին կարեւոր նամակ մի կայ քովը:

Սարգիս Մ Թորոսեան որ Հայկական
ճաշարան ունէր, 71 Harrison Ave. Ի Պոս-
թըն, փոխադրած է 52 S. Margin St. Արե-
ւելեան խոհարարութիւն, համեստ գնե-
րով, Հայոց խիստ յարմար. տիպոններուն
խիստ մօտիկ:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հա-
ւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն
հարստահարութեանց և Դրան հակահայ
քաղաքականութեան ահաւոր նկարագիրն
և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգա-
յին շարժմանց առաջնորդողի մի փորձա-
նութեան և ձգտմանց շրջափոխութիւնն:
Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական
ատենութիւն Ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հան
դերձ պատուական և լաւ յաջողեալ
պատկերաւն Հայրիկի: 1892, գին 10 սէնթ
կամ 50 սանթիմ:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21
դաւ 16 պատկերօք և յաւելուածով ազ-
գային ու օտար հատընտիր ընթերց-
ուածոց, երկաթիքութիւն Մ. Ս. Գաբրիէ
եանի, 1891, գին 1 թալէս կամ 5 ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՅԵԱԼՆ
ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»-ի
մէջ հրատարակուած. գրեալ Մ. Ս. Գաբ-
րիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք գինուորա
կան կրթութեան, բազում ձեւերով բացա-
րեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գա-
պարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի
գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

HOPKINS & ATKINS
PATENTS Washington, D. C. 20
years' experience
write for information

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Պ Ե Պ Ա Պ Պ Պ Պ

(Հաստատեալ Ի 1849)

65 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և
չափաւոր գնով

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան
30 Eddy Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston Mass.

ԵՂԵՐԻ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նա-
հանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու
տուններու շահերն միեւնոյն տան վերաբե-
րելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց
գրամատանց միոյն հետ համաձայնութիւն
մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմե-
րէն ստակի փոխադրութեան գներուն բա-
ւական տարբերութիւն մը ձեռք բերած
ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ա-
մենէն վար գներով ստակի փոխադրու-
թիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուր-
քիոյ կողմերն: Անոնք որ կը կարօտին ըս-
տակ ղրկել զէպի Եւրոպա կամ Կ. Պոլսոյ,
Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալա-
թիա, Բալու, Ակն, Արաբկեր, Չիմիկէզէկ,
Չունքուշ, ընդհանուր շրջականներով,
պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց
հասցէներուն, որով իրենց փափաքանաց
համեմատ պիտի ստանան անմիջապէս ի-
րենց փոխանակագրերն ամենէն գոհացու-
ցիչ կերպով, և փոխարէնը պիտի գան-
ձուին առանց գծուարութեան և առանց
որ և է ծախքի մի հարկ ունենալու:

C. F. RANDALL

177 Front ST.

Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի
արգոյ Հայ Հասարակութեան թէ իմ վե-
րոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և բը-
պըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և
այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը
լինի իմ Հայ Հաճախորդաց:

Ծանուցանելով ևս թէ բացարձակա-
պէս և ՄԻՍՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպա-
սեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգու-
նօք

Չերդ
Բանտօլ

«ՀԱՅՔ»

Թղթակաղմ

Ա. տարի 1 տողար 50 սէնթ կամ 7 ֆր. 50ս.
Բ. տարի 2 տողար կամ 10 ֆրանք

ՎՍՅԵԼՈՒՉ ՉԳԵՍՏՆԵՐ

գնեւու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կարել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց
չափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է
385 Մէյն Փողոց, Ուուսթըր,
385 Main St. Worcester, Mass.



REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.

A RELIABLE REMEDY FOR

Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 10 cents. Address

THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules: for sour stomach.

Ripans Tabules: for liver troubles.

Ripans Tabules: a family remedy.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 77 Էփրինու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

THE WORCESTER MECHANICS
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԵԳԵՆԻԲՍ ՍԵՅՎԻՆԿՍ ՊԷՆԲ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս գնել վերայիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յուսովար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով:

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

Ե.ՉԳԵՍԻՆ ՓՈԽԵԴԵՐՉ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէս, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդը կ'ընդունին հազար թալէս, եթէ պայմանն հազար թալէսի է, կամ մինչև հինգ հազար թալէս, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղը մեռնի, պայմանաւ դրբեալ հազար կամ աւելի թալէսն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի անդեկութիւն տալ

Ո՛ր Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս: Իմ անունս լաշան է, և խանութս կը գըտնուի Ֆրոնթ Թրիթի 60 նիւմէրոն: Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ: Ո՛վ որ կ'ուզէ չխաբուիլ և չունչը չհատցունել գին կարելու համար, և ո՛վ որ չուզեր որ ստքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կօշիկներն փորձէ:

T. LACHANCE, կօշկավաճառ
60 Front St. Worcester, Mass.

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ . Ս . Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն